«ՋԻՓԻ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԸԴՎԱՅՁԵՐԻ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2025

ՋԻՓի Մենեջմենթ Ըդվայզերի ՍՊԸ

Իսահակյան 18, Երևան, ՀՀ
T: +374 (93) 00-64-81
E: info@gpadvisory.am
W: https://gpadvisory.am/

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

ՋԻՓԻ Մենեջմենթ Ըդվայզերի ՍՊԸ

Իսահակյան 18, Երևան, ՀՀ
T: +374 (93) 00-64-81
E: info@gpadvisory.am
W: https://gpadvisory.am/

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		253	297
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**253**	**297**
Ընթացիկ ակտիվներ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող արժեթղթեր	4	17,061	14,000
Առևտրային դեբիտորական պարտքեր	5	3,054	3,642
Կանխավճարներ		401	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	13,414	14,703
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**33,930**	**32,345**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**34,183**	**32,642**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	7	1,600	1,070
Կուտակված շահույթ / (վնաս)		25,344	29,991
Ընդամենը սեփական կապիտալ		**26,944**	**31,061**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր		50	77
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ		39	469
Պարտավորություններ բյուջեյի նկատմամբ	8	3,109	1,035
Ստացված կանխավճարներ		414	-
Պահուստներ	9	3,627	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**7,239**	**1,581**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**7,239**	**1,581**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ		**34,183**	**32,642**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 25 ապրիլի 2024թ.

Տնօրեն՝
Գագիկ Գրիգորյան

ՋԻՓԻ Մենեջմենթ Ընվայզերի ՍՊԸ

Իսահակյան 18, Երևան, ՀՀ
T: +374 (93) 00-64-81
E: info@gpadvisory.am
W: https://gpadvisory.am/

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	**Ծան**	**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**	**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Ծառայությունների մատուցումից հասույթ	10	45,283	36,855
Ընդամենը հասույթ		**45,283**	**36,855**
Ծառայությունների մատուցման հետ կապված ծախսեր	11	(29,121)	(20,075)
Համախառն շահույթ		**16,162**	**16,780**
Տոկոսային եկամուտ		332	988
ԻԱԾՎ ակտիվների վերաչափումից զուտ օգուտ		1,037	-
Վարչական ծախսեր	12	(9,995)	(3,339)
Իրացման ծախսեր		(717)	(12)
Այլ գործառնական ծախսեր		(448)	(2,141)
Զուտ օգուտ / (վնաս) արտարժույթի վերագնահատումներից		190	(2,325)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**6,561**	**9,951**
Շահութահարկի գծով (ծախս) / փոխհատուցում	13	(322)	-
Տարվա շահույթ (վնաս)		**6,239**	**9,951**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		**-**	**-**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**6,239**	**9,951**

ՋԻՓԻ Մենեջմենթ Ըդվայզերի ՍՊԸ

Իսահակյան 18, Երևան, ՀՀ
T: +374 (93) 00-64-81
E: info@gpadvisory.am
W: https://gpadvisory.am/

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	**Կանոնադրական կապիտալ**	**Կուտակված շահույթ / (Չծածկված**	**Ընդամենը**
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**600**	**30,304**	**30,904**
Հաշվետու տարվա շահույթ /(վնաս)	-	9,951	9,951
Վճարված շահաբաժիններ	-	(10,264)	(10,264)
Կանոնադրական կապիտալի ավելացում	470	-	470
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,070**	**29,991**	**31,061**
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,070**	**29,991**	**31,061**
Հաշվետու տարվա շահույթ /(վնաս)	-	6,239	6,239
Վճարված շահաբաժիններ	-	(10,886)	(10,886)
Կանոնադրական կապիտալի ավելացում	530	-	530
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,600**	**25,343**	**26,943**

ՋԻՓԻ Մենեջմենթ Ըդվայզերի ՍՊԸ

Իսահակյան 18, Երևան, ՀՀ
T: +374 (93) 00-64-81
E: info@gpadvisory.am
W: https://gpadvisory.am/

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**	**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից մուտքեր	46,804	23,131
Այլ մուտքեր	234	988
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(24,477)	(13,355)
Վճարումներ մատակարարներին	(9,457)	(5,515)
Վճարումներ հարկերի և տուրքերի գծով	(2,387)	(1,291)
Այլ գործառնական ելքեր	(444)	(195)
Գործառնական գործունեությունից դրամական	**10,273**	**3,763**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումից ելքեր	-	(98)
Ներդրումային գործունեությունից դրամական	**-**	**(98)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների		
Ֆինանսական ներդրումներ	(1,926)	(2,500)
Շահաբաժնի վճարում	(10,342)	(9,750)
Կանոնադրական կապիտալի համալրում	530	470
Ֆինանսավորման գործունեությունից դրամական	**(11,738)**	**(11,780)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ	**(1,465)**	**(8,115)**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,703	24,240
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	176	(1,422)
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական	**13,414**	**14,703**

ՋիՓի Մենեջմենթ Ըդվայզերի ՍՊԸ

Իսահակյան 18, Երևան, ՀՀ
T: +374 (93) 00-64-81
E: info@gpadvisory.am
W: https://gpadvisory.am/

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

ՋիՓի Մենեջմենթ Ըդվայզերի ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է 23 մարտ 2019 թվականին Գրիգորյան ընդ Փարթնըրս անվանմամբ: Ընկերությունը 2022 թվականին վերանավնավել է ՋիՓի Մենեջմենթ Ըդվայզերի:

Ընկերության կանոնադրական կապիտալի 100% պատկանում է Գագիկ Գրիգորյանին:

Ընկերության գործունեության հասցեն է՝ "Իսահակյան" Բիզնես Կենտրոն, 2-րդ հարկ, ք. Երևան, 0002, ՀՀ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0079, Մառի նրբ. 8, բն 6:

Ընկերությունը «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) անդամ է դարձել Պալատի խորհրդի 2023թ դեկտեմբերի 21-ի թիվ 104-Ա որոշման հիման վրա և 2023թ դեկտեմբերի 21-ին գրանցվել է Պալատի ռեեստրում: Ընկերության հիմնական գրանցման գրառման համարն է (ՀԳԳՀ) 1 23 08 040:

Ընկերությունը մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- Աուդիտ և աուդիտին հարակից ծառայություններ,
- Խորհրդատվական ծառայություններ,
- Ներքին աուդիտի և ՓԼ/ԱՖ արտապատվիրակաման ծառայություններ:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 2023թ. դեկտեմբերի 31-ին կազմել է 5 մարդ (2022թ.՝ 4 մարդ):

Պատրաստման հիմքերը

1.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

1.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով կամ իրական արժեքով:

1.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով եթե այլ բան նշված չէ, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

1.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 12-ում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

1.5 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտորնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
ԱՄՆ դոլար	404.79	393.57

1.6 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները գրասենյակային *գույք և համակարգչային գույք* հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցիօգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Տրանսպորտային միջոցներ	- 10 տարի
Տնտեսական գույք	- 5 տարի
Այլ	- 3 տարի

1.7 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Ընկերության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ընկերության բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

<u>Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող</u>

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

<u>Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)</u>

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

<u>Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)</u>

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստինքյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉՇՎ):

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Ընկերությունը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Ընկերությունը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Ընկերությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես "Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող" (ԻԱՉՇՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը ընտրել է ԻԱՉՇՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Ընկերությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը:

Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Ընկերությունը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Ընկերությունը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Ընկերությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: "Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների" (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

1.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

1.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

1.10 Հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի: Ընկերությունը հասույթը չափում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ընկերության հասույթը ձևավորվում է աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների մատուցումից:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա:

Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- Հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- Հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Խումբ,
- Հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը, և
- Հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Գործարքի ավարտվածության աստիճանը որոշվում է ներքոթվարկյալ մեթոդներից որևէ մեկով (կիրառվում է տվյալ դեպքի համար առավել տեղին մեթոդը)՝

- Կատարված աշխատանքների ուսումնասիրություն,
- Տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և մատուցվելիք ծառայությունների ամբողջ ծավալի հարաբերություն: Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

1.11 Վաճառքի ինքնարժեք

Ծառայությունների մատուցման ծախսումները ներառում են՝

- այն ծախսումները, որոնք ուղակիորեն վերաբերում են կոնկրետ մատուցված ծառայությանը,
- այն ծախսումները, որոնք վերագրվում են ընդհանուր ծառայությունների մատուցմանը և կարող են վերագրվել տվյալ ծառայությանը,
- այն ծախսումները, որոնք, ծառայության պայմանագրի պայմանների համաձայն, հատուկ գանձվում են պատվիրատուից:

Մատուցված ծառայությանն ուղղակիորեն վերաբերող ծախսումներն են ծառայության մատուցման աշխատանքներում ընդգրկված աշխատակիցներին հատուցումները, օգտագործվող հիմնական միջոցների մաշվածությունը, այլ կազմակերպություններից ստացված խորհրդատվական ծառայությունները: Այն ծախսումները, որոնք վերագրվում են ընդհանուր պայմանագրի գործունեությանը և կարող են վերագրվել կոնկրետ պայմանագրին, ընդգրկում են վարձակալական վճարները: Ծախսումները, որոնք չեն կարող վերագրվել պայմանագրի գործունեությանը կամ չեն կարող վերագրվել պայմանագրին, չեն ներառվում ծառայությունների մատուցման ծախսումների մեջ: (ժբ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումներից ստացվելիք տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված օգուտը: Տոկոսային եկամուտը շահույթում կամ վնասում ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական ծախսերը ներառում են վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսերը, պահուստների գծով զեղչի վերականգնումը, փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները: Վարկերի և փոխառությունների գծով բոլոր ծախսերը ճանաչվում են շահույթ կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներկայացվում են զուտ հիմունքով:

1.12 Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկը (հարկը) ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկ է: Հետաձգված շահութահարկը (հարկը) ապագա ժամանակաշրջաններում վճարման կամ փոխհատուցման ենթակա հարկ է, որը սովորաբար Խմբի կողմից իր ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ հաշվեկշռային արժեքով փոխհատուցելու կամ մարելու արդյունք է, ինչպես նաև տվյալ պահին չօգտագործված հարկային վնասները հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հարկային հետևանք:

Ընկերությունը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Ընկերությունը այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Ընկերությունը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը: Ընկերությունը ընթացիկ հարկային պարտավորության կամ ընթացիկ հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս: Խումբն ապագա ժամանակաշրջաններում՝ որպես անցյալ գործարքների կամ դեպքերի արդյունք, փոխհատուցվելիք կամ վճարվելիք հարկի համար ճանաչում է հետաձգված հարկային ակտիվ կամ հետաձգված հարկային պարտավորություն: Ընկերությունը հետաձգված հարկային պարտավորության կամ հետաձգված հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝

որպես հարկի գծով ծախս: Ընկերությունը ճանաչում է հետաձգված հարկային ակտիվների հետ կապված գնահատման պահուստ այնպես, որ զուտ հաշվեկշռային արժեքը հավասար լինի այն ամենաբարձր գումարին, որը ավելի շատ հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի ընթացիկ կամ ապագա հարկվող շահույթի հիման վրա

2 Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող արժեթղթեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Ցե-Կվադրատ Ամպեգա Ցե-Քյու Արմենիա Գրոութ ֆոնդ, Դաս B	15,045	14,000
Ակբա Բանկ ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմս	2,016	-
	17,061	14,000

Ընկերությունը 31 դեկտեմբեր 2023 թ-ի դրությամբ տիրապետում է 9835.4643 Ցե-կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՍՊԸ-ի կողմից կառարվող Ցե-Քյու Արմենիա Գրոութ ֆոնդ, Դաս B-ի փայեր: Փայերի իրական արժեքը որոշվել է ներդրված ակտիվների իրական արժեքի հիման վրա:

2023 թ-ի ընթացքում, Ընկերությունը ձեռք է բերել Ակբա-Բանկ ՓԲԸ կողմից թողարկված AMACBAB28ER5 թվով 20 պարտատոմս 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով և 11 տոկոս արժեկտրոնային եկամտաբերությամբ:

3 Առևտրային դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Մատուցված ծառայությունների գծով	3,054	3,642
	3,054	3,642

4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում	9,577	11,903
Ավանդներ	3,837	2,800
	13,414	14,703

5 Կանոնադրական կապիտալ

Ընկերության միակ հիմնադիրն ու բաժնետերն է հանդիսանում ՀՀ քաղաքացի Գագիկ Ամատունու Գրիգորյանը: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,600 հազար ՀՀ դրամ, որը կազմված է 1 բաժնեմասից, որի անվանական արժեքը կազմում է 1,600 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,070 հազար ՀՀ դրամ):

Ընկերության կանոնադրական կապիտալն ամբողջությամբ տեղաբաշխված է և լրիվ վճարված: Հաշվետու տարում կատարվել է կանոնադրական կապիտալի լրացում 530,000 ՀՀ դրամի չափով:

6 Պարտավորություններ բյուջեյի նկատմամբ

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Պարտավորություններ շահութահարկի գծով	322	-
Պարտավորություններ շրջանառության հարկի գծով	655	1,017
Պարտավորություններ եկամտային հարկի գծով	1,194	-
Պարտավորություններ սոցիալական վճարի գծով	313	-
Պարտավորություններ ԱԱՀ-ի գծով	519	-
Պարտավորություններ դրոշմանիշային վճարի գծով	61	18
Պարտավորություններ այլ հարկերի և վճարների գծով	45	-
	3,109	1,035

7 Պահուստներ

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Սկզբնական մնացորդ	-	-
Զուտ ավելացում/(նվազում)	3,627	-
Վերջնական մնացորդ	**3,627**	**-**

Սույն ծանոթագրությունում ներկայացված պահուստն իրենից ներկայացնում է աշխատակիցների չօգտագործված արձակուրդների գծով հաշվարկված պահուստը:

8 Ծառայությունների մատուցումից հասույթ

Մատուցված ծառայությունների գծով գումարները ճանաչվում են որպես հասույթ ծրագրի ավարտվածության աստիճանի հիման վրա՝ համաձայն թիվ 1.10 ծանոթագրությունում նկարագրված մեթոդի:

Ծառայությունների գծով հաշվեգրված հասույթը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և մատուցվելիք ծառայությունների ամբողջ ծավալի հարաբերակցության հիման վրա:

9 Ծառայությունների մատուցման հետ կապված ծախսեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Աշխատակիցներին վճարվելիք աշխատավարձի գծով	28,681	13,053
Ստացված ծառայությունների գծով	440	7,022
	29,121	**20,075**

10 Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի	**2022թ. դեկտեմբերի**

	31-ին ավարտված տարի	31-ին ավարտված տարի
Գրասենյակային ծախսեր	3,286	2,297
Փոստի և հեռահաղորդակցության գծով ծախսեր	109	-
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր	4,408	881
Բանկային ծախսեր	141	71
Չփոխհատուցվող հարկերի գծով ծախսեր	1,971	-
Այլ	80	90
	9,995	3,339

11 Շահութահարկի գծով (ծախս) / փոխհատուցում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկի գծով (ծախս) / փոխհատուցում	(322)	-
Հետաձգված հարկի գծով (ծախս) / փոխհատուցում	-	-
	(322)	-

12 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնքտվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

13 Պայմանական դեպքեր և պարտավորվածություններ

13.1. Դատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը ներգրավված չէ դատական գործերում և հայցերում:

13.2. Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների առարկա են: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները:

13.3 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու տարվանից հետո մինչև հաշվետվությունների հաստատման ամսաթիվը ճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

13.4. Վերահսկողություն

Ընկերության վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Գագիկ Գրիգորյանը:

Ստորև ներկայացված է փոխկապակցված կողմերի հետ գործարքները:

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	7,200	7,200
	7,200	7,200